

ԺԶ. ԴԱՐԻ ՄԻ ԽԱԶՔԱՐ

Ա.

Հայ ճարտարապետական մշակոյթի մէջ ուրոյն տեղ են դրաւում հին գեղարուեստական զարդարանդարները, որոնց թանկապին մնացորդները պատկերում են Հայ քանդակադրամական արուեստի ինքնատիպ ոճը, բնոյթը և այն հիմնական յատկանիշները, որոնք բնորոշ են իրենց գծապրական նոր արժէքներով և էական առաջարկանիշներով:

Այդ զարդարանդակների զանազան ժամանակների և վարպետների մուրճում փորագրուած տարրեր գեղեցկութիւններ են, որոնք որքան ուշադրաւ են իրենց պարզութեամբ, այնքան էլ դրաւիչ են իրենց խորոթեամբ ու մասմութեամբ:

Սակայն, պիտի ընդդեմ, որ գեղարուեստական հազուադիւտ քանդակներ տեսնում ենք Հայաստանի ճարտարապետութեան ոսկեպարում: Դա է. դարն է: Քադարական փոթորկալից այդ շրջանում, հնայած որ Հայաստանը միշտ աւելումների, կոտորածների թատերաբեմ է հանդիսանում, բայց Հայ արուեստագէտի սոսկդադրծող աւազանդը է հայկական ճարտարապետութեան դրուեստութեան դրուեստութեան գլուխ-գործոց՝ Զուարքնեցին, որի վրայ խորին հմտութեամբ փորագրուած քանդակներն ու զարդարանդակ պատկերները այսօր ուրոյն տեղ են դրաւում համաշխարհային ճարտարապետութեան պատմութեան մէջ: Այդ գեղարուեստական հոյակապ յուշարձանի վրայ, տեղ-տեղ, պատշաճութեան համար, իրեւ զարդարանդակ իշխում են խաչքարեր:

Կոթողական խաչքարերի սքանչելի և նուրբ քանդակներ տեսնում ենք նաև Բագրատունեան գեղարուեստի վերածնութեան շրջանում:

Դրանք մէծ մասամբ գերեզմանների խաչքարեր են, որոնցից ամենահինք հասել է մեջ մինչեւ 10-րդ դարը:

10-րդ և հետագայ դարաշրջաններում գարգանում է նաև եկեղեցիների պատերի վրայ խաչքար քանդակելու սովորութիւնը:

Մի հանգամանք պարզ է, որ 11-13 դարերում ամենից շատ տեսնում ենք արտակարդ չքեղ արուեստով, վսկէ ոճով և բարդ մանոււածոյ քանդակագրգութեամբ կերտուած խաչքարեր, որոնք իրենց լուսթեամբ պատմում են Հայ արուեստագէտների հմտութեան մասին: Այդպէս է պատկերն Անիում կառուցուած «Առաքելոց» քուակուսի խաչաձև եկեղեցում, որ իր ճարտարապետական նոր ոճով տարրերում է միւս եկեղեցիներից և զարդարուած է բաղմաթիւ խաչարձաններով ու հիմնալի նուրբ քանդակներով:

Այդ տեսակէտից յատուկ ուշադրութեան արժանի է մանաւանդ 13-րդ դարը՝ Ռուբինեան գերիշխանութեան պատմաշրջանը, երբ ծաղկում է նկարչութիւնը և առանձին փալլ է սոտանում գեղագրարդ քանդակագրութիւնը: Ցիշատակենք յատկապէտէ Սանահնում՝ Սարգսի խաչքարը, Հաղթառում և Մըրենում՝ խմբական խաչքարեր:

13-րդ դարում խաչքարային արուեստի ինքնուրոյն և բարձրարձէք սոսկեազործութիւններով փալլում են երկու մէծ և տաղանդաւոր վարպետներ՝ Պաւլոսը և Անմիկը:

Բ.

16-րդ դարաշրջանի առաջին քառորդում գեղարուեստական զարդառնութ քանդակաւած հազուադիւտ խաչքարերի թանկապին մնացորդներից մէկն է Սպահանի Զարմահալ գաւառի Հայարնակ Մամուռուն զիւղի եկեղեցու դրան վերեւի պատի ճակատին իշխող մարմարէ խաչքարը, որ ունի 443 երկար տարիների անցեալ:

Դա զաղթական զիւղացիութեան զե-

զարուհուական և հայրենակարօս ջերմ զգացումներն արտայալող մի ցայտուն կոթող է: Շահ-Արքա Առաջինի զաղթի

քարբ(1): Յուղիչ է նրա պատմութիւնը, որ օտարութեան մէջ ևս հալածում է: Գեղարուեստի թշնամի մի գաժան ձեռք քա-



մռայլ պատմաշրջանում, քաղաքական յուղումնալից այդ ժամանակում, կեանքի և մահուան ամենաողբերգական գրութեան մէջ անգամ, 17-րդ դարու Հայ պիտացիները չեն մռանում իրենց պապերից աւանդ մնացած արուեստի թանկաղին մնացորդները և իրենց եղների ու կոմերի հետ Հայաստանից բերում են Իրանի հեռաւոր, մի խուլ անկիւնը: Այդ պատմական հութիւններից մէկն է զարդարանդար խաչ-

րով մէջտեղից կիսել է մարմարը: Այդ պիտաւոր գրութեան մէջ, սակայն, նա զարձեալ պահել է իր զեղեցկութիւնը: Պահել է

(1) Այս խոչված Առաքել Գաւրիմեցին իր պատմութեան 212-րդ էջում չի յիշատակում 1615 թուականին կըմիածնից թերուոծ 15 տարերի ցուցակում: Գա հաստատում է, որ խաչքարը գիւղացիներն իրենց են բերել են 1005 թուի զադի ժամանակ:

նաեւ մի անողաճոյն նախադասութիւն, որ կարդում ենք մարմարի ներքեւում.

ՄԲ ԽԶՍ ՑՑԿ Է ԱՐԳԵԼՎԻՆ ԹՀԲ
(Սուրբ Խաչո յիշատակ է Առաքելին.
Թ. 972+551=1523)

Ո՞գ է Առաքելը, ի՞նչ է ներկայացնում նրա գեղարուեստական գործունեութեան պատմութիւնը. դժբախտարար չկայ որևէ դրաւոր փաստաթուղթ։ Միայն մարմարի վրայ քանդակուած թշբ մեսրոպեան համբ տառերը լեզու են առնում եւ պատմում, որ խաչը եւ նրբահիւս զարդերը փորագրուել են 16-րդ դարի առաջին քառորդում։ Պատմում են, որ քանդակագործը Հայաստանի տաղանդաւոր ու վարպետ արուեստագէտներից մէկն է, որ կերտել է զեղարուեստական արժէք ներկայացնող զարդաքանդակներ։ խաչարձաններ։

Ինչումն է կայանում, սակայն, Առաքելի զարդաքանդակի դիխաւոր, էտկան յատկանիչը եւ որո՞նք են նրա գեղարուեստական առանձնայատկութիւնները։

Բնորոշ է նախ մարմարի քանդակի ոճը, որ որբան պարզ՝ նոյնքան էլ ինքնատիպ է եւ գեղեցիկ, հիւսուածքը հողերանօրէն ներդաշնակ եւ գրաւէ։ Գեղեցիկ է եւ նկարագրագումը, որի բովանդակութեան վսեմութիւնը միանալով բարզ, բայց սահուն ու ներդաշնակ հիւսուածքի հետ, կազմել է գեղարուեստական մի ամբողջութիւն։ Քանդակագարդին առանձին վեհութիւն են տալիս նաեւ նոյնքան գեղեցիկ հիւսուած նուրբ գծապատկերները, որոնք իրենց ընդհանուր ներդաշնակութեամբ եւ պարզութեամբ գեղարուեստական ուրոյն արժէք են ներկայացնում։ Առհասարակ, մարմարի շուրջը քանդակուած է վարպետ մուրճով, բարձր ողեւորութեամբ, խորունկ ու քնքոյց զգացումներով, ուր անկեղծութիւնը, պարզութիւնը, իրենց ամրողական ներդաշնակութեամբ համակում են դիտող ամէն մի զդայուն անձի եւ դարթեցնում նրա հոգում գեղարուեստական

տարրեր խոհեր ու արամազքութիւններ։ Բնորոշ է եւ այն, որ այնտեղ քանդակագործն երեւան է դալիս իր ինքնուրոյն արւետով եւ ժամանակի քանդակագործութեան ընդհանուր զծերով։ Նա կարողացել է մի փոքրիկ մարմարի վրայ պատկերել քանդակագործական արուեստի մի ամբողջ տեսարան, ուր վարպետորէն ամփոփուած է Հայ ճարտարապետութեան ոճի յատկանշական ձեւերից մի ցայտուն նմոյց։

Սակայն նշենք, որ մարմարի ինքնաստիպ արուեստն ունի մի հիմնական նպատակ՝ տալ 16-րդ դարի քանդակագործութեան էտիթիւնը, ներկայացնել նրա իւրաժառուել մի նոր ոճը։ Այդ ծրագրով էլ քանդակագործն օգտագործել է եւ կիրառել զծաղութեան ամենանրբին ձեւերը, ոճի պարզութիւնն ու մեզմութիւնը, հիւսուածքի համաչափ գասաւորումը եւ գունեղ ներդաշնակութիւնը։

Զարդաքանդակի հիւսուածքների ոճի զունազեղութեան տեսակէտից եւ վորագրութիւնն ուշագրաւ է։ Մարմարի վրայ 16-րդ դարու Հայ քանդակագործութեան մի լաւագոյն եւ էտկան ոճի երանդաւորումն է նկարուած զծերի ու պատկերների ներդաշնակութեամբ, բայց քանդակուած է բոլորովին նոր ոճով, նոր ուղղութեամբ եւ նոր պատկերաւորումով։

Եզրափակենք։ Զարմահալ գաւառի Մամուռան գիւղի եկեղեցու զրան վերեւի պատի ճակատին իշխող խաչքարի փորագրութիւնը 16-րդ դարի Հայ քանդակագործական արուեստի լաւագոյն ստեղծագործութիւններից մէկն է, որի ոճի ինքնուրունութիւնն ու հարազատութիւնը, երկրաշափական գեղեցիկ գծադրութեան նրբութիւնը, բարդ բայց սահուն հիւսուածքի ներդաշնակութիւնը, քնարական պատկերաւորութիւնը, ձեւերի ու հիմնական կառուցւածքի պարզութիւնն ու խորութիւնը կադմուն են մարմարի դիխաւոր զեղեցիկութիւնները։ Երեւոյթները, որոնք արուեստի տեսակէտից իսկամ յատկանշական են։